ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԶԱՐՅԱՆ

Գիտատեխնիկական հեղափոխության ներկա ժամանակաշրջանին բնութագրական է գիտության սերտ կապը և միաձուլվելն ինչպես արտադրության, այնպես էլ հասարակական կյանքի մյուս բնագավառների ինստիտուտների և երևույթների հետ։ Այդ պրոցեսին խթանավորում է գիտության դիֆերենցիացիայի վրա ծավալվող նրա առանձին ճյուղերի հարաճուն ինտեգրացիան։

Գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում գիտության և արտադրության, մասնավորապես բնագիտության և արտադրության ինտեգրացիայի պրոցեսները լայնորեն լուսաբանված են սովետական փիլիսոփաների, սոցիոլոգների, տնտեսագետների, գիտաբանների աշխատություններում։ Գրականության մեջ մասնավորապես բացահայտված են գիտության և արտադրության միջև գոյություն ունեցող օրգանական կապի շատ հարադրություններ, իր հիմնական գծերով լուսաբանված է գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու պրոբլեմը։

Մինչդեռ ժամանակակից գիտության և նրա առանձին ճյուղերի զարգացման համար ոչ միայն բնութագրական է նյութական բարիքների արտադրության հետ միաձուլվելու, անմիջական արտադրողական ուժի վերածվելու ֆենոմենը, այլ նաև նրա թողած որոշիչ ազդեցությունը սոցիալական կյանքի մյուս ինստիտուտների վրա։

Այս առումով արդիականություն է ձեռք բերում իրավագիտության և գործող իրավական համակարգի կապերի բացահայտումը, մասնավորապես, գործող օրենսդրության նորմերում իրավագիտության նվաճումների «առարկայանալու» պրոցեսի հետազոտությունը։ Նման ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում պարզելու և ճշգրտելու իրավագիտության տեղը զարգացած սոցիալիստական հասարակության իրավական կարգավորման մեխանիզմում։

Իրավագիտությունը, հասարակական մյուս գիտությունների հետ միասին, իր վրա է կրում գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը և ինքն էլ այդ հեղափոխության «գործող անձերից» մեկն է։ Հետևաբար, գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանի գիտությանը բնութագրական երևույթներն ի հայտ են գալիս նաև իրավագիտության բնագավառում, մասնավորապես, մի կողմից, իրավագիտության, մյուս կողմից, գործող իրավական համակարգի միջև ծավալվող փոխհարաբերություններում։

Բայց իրավագիտության մեջ այդ երևույթները դրսևորվում են առանձնահատուկ ձևով, որ պայմանավորված է ինչպես նրա յուրահատկություններով, այնպես էլ իրավունքի՝ որպես հասարակության քաղաքական վերնաշենքի

տարրին բնորոշ կողմերով։ Այստեղ գիտության վերածվելն անմիջական արտադրողական ուժի ածանցվում է գործող իրավական համակարգի կողմից, ձեռք է բերում իրավաբանական երանգավորում։ Իրավագիտության նման առարկայացման առաջին փուլին բնութագրական է նրա տեսական կոնցեպտուալ դրույթների առարկայանալը, մարմնավորվելը գործող օրենսդրության մեջ։

Շարադրվող հոդվածը նպատակ ունի բացահայտելու իրավագիտության՝ «արտադրության տարրի» վերածվելու պրոցեսի առանձնահատկությունները, գլխավոր փուլերը և հետևանքները։

«Գիտությունը,— գրում է Ա. Ուրսուլը,— փիլիսոփայական տեսանկյունից իրենից ներկայացնում է գիտելիքների համակարգ, գործունեություն և սոցիալական ինստիտուտ»[1]։ Իրավագիտությունը նույնպես գիտելիքների համակարգ է, «որի շրջանակներում և որի միջոցով իրականացվում է իրավունքի տեսական և կիրառական յուրացումը»[2]։

Այստեղից բխում է, որ իրավագիտության օգնությամբ իրականացվում են երկու կարգի խնդիրներ. ա) գիտականորեն հետազոտվում են իրավական երևույթները, բ) դրանք տեսականորեն և գործնականորեն յուրացվում են։

Նման յուրացման նպատակն է ապահովել իրավունքի նպատակաուղղված ձևակերպումը և կիրառումը, կառավարել իրավական կարգավորման մեխանիզմը[3]։

Ս. Ալեքսեևը իրավացիորեն նշում է. «իրավագիտության որոշիչ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրենից ներկայացնում է հասարակագիտության մի այնպիսի բնագավառ, որի մեջ զուգորդված են տեսական և կիրառական գիտության գծերը»[4]։

Այս տեսակետից, հեղինակի կարծիքով, իրավագիտությունը որոշակի արտաքին նմանություն ունի ինչպես տեխնիկական գիտությունների, այնպես էլ բժշկագիտության հետ, քանի որ իրավագիտությունը նույնպես կոչված է ծառայելու գործնական կարիքների, «այն կարիքներին, որոնք վերաբերում են իրավունքի ռացիոնալիզացմանը, ստեղծարար գործունեությանը, օրենսդրության կատարելագործմանը, իրավունքի կիրառման գիտական կազմակերպմանը, իրավաբանական գործերի լուծման ամենից ավելի արդյունավետ եղանակների մշակմանը և այլն»[5]։

---

[1] А. Д. Урсул, Проблема информации в современной науке. Философские очерки, М., 1975, стр. 96. «Խստորեն ասած,— գրում է հեղինակը,— եթե գիտությունը պատկերվի որպես գործունեություն, ապա նրա որպես գիտելիքների համակարգ և սոցիալական ինստիտուտ լինելու հանգամանքները ի հայտ են գալիս որպես սոսկ մարդկային գործունեության հարադրություններ» (նույն տեղում)։

[2] С. С. Алексеев, Проблемы теории права. Курс лекций в двух томах, т. II, Нормативные юридические акты. Применение права. Юридическая наука, Свердловск, 1973, стр. 303.

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 304 (ընդգծումը մերն է)։ Հեղինակը նշում է, որ իրավագիտության շրջանակներում կատարվող ընդհանուր տեսական հետազոտությունները «բնութագրվում են նպատակաուղղվածությամբ» և դրա համար էլ իրավագիտության առարկան կազմում են ոչ միայն «իրավական կարգավորման առանձնահատուկ օրինաչափությունները, այլ նաև իրավունքի գոգմերը. իրավաբանական գործերի լուծման եղանակները և մեթոդները և այլն» (նույն տեղում)։

[5] Նույն տեղում։

Հետևաբար իրավագիտությունը չի բավարարվում իր առարկայի զուտ տեսական հետազոտությամբ։ Իրավունքի գործող համակարգը և հասարակական կյանքում ծավալվող իրավական երևույթները հետազոտելիս իրավագիտությունը որոշակի կոնկրետ կիրառական նպատակներ է հետապնդում. այն է՝ կատարելագործել և մեր հասարակության կյանքում ծավալվող հարաբերությունների բնույթին ու բովանդակությանը համարժեք դարձնել գործող օրենսդրությունը։

Իրավագիտությունը իրավական կարգավորման մեխանիզմի մեջ մտնում է իրավագիտակցության միջոցով՝ հանդիսանալով վերջինիս այնպիսի տարրը, որն ամենից առավել է օժտված այդ մեխանիզմի մյուս տարրերի վրա ներազդելու պոտենցիալ ուժով[6]։

Հայտնի է, որ իրավագիտակցությունն ինքնին արդեն իսկ օժտված է հասարակական հարաբերությունների վրա գաղափարական ազդեցություն թողնելու հատկությամբ և, հետևապես, որոշակի կարգավորիչ ուժով։ Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Չխիկվաձեն, իրավագիտակցությունը հանդես է գալիս «որպես կապող օղակ օրենսդրի կամքի նորմատիվ արտահայտության և իրական հասարակական հարաբերությունների միջև»[7]։

Այս տեսակետից ուշագրավ է իրավագիտակցության դերի բացահայտումն իրավաստեղծ և իրավակիրառար գործունեության պրոցեսում, դա հնարավորություն է ստեղծում ցույց տալու այն ընդհանուր ֆոնը, որի վրա դրսևորվում է իրավագիտակցության ու նրա ամենից ավելի ակտիվ տարրի՝ իրավագիտության մասնակցությունն իրավական կարգավորման մեխանիզմի գործունեությանը։

Իրավաստեղծությունը սկսվում է կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների ուսումնասիրությունից, որն իրավագիտությունն իրականացնում է տնտեսագիտության, սոցիոլոգիայի և հասարակական ուրիշ գիտությունների հետ միասին։ Ըստ որում, իրավագիտությունը իրավական կարգավորման ապագա առարկան հետազոտում է նպատակաուղղված ձևով՝ հաշվի առնելով սպասվելիք իրավական կարգավորման պահանջները և այդ պահանջների դիրքերից վերափոխման ենթարկելով հասարակական մյուս գիտությունների հավաքած փաստերը։

Իրավաստեղծության այս նախնական փուլին հաջորդում է պետական կամքի իրավաբանական ածանցումը։ «Օրինաստեղծ պրոցեսում,— գրում է Ա. Ֆ. Չերդանցևը,—համատեղվում են ճանաչողական և արժեքային-գնահատող գործունեությունները։ Առաջինը կոչված է ծառայելու երկրորդին։ Իրականության իմացության հիման վրա օրենսդիրը գնահատում է իրականության այս կամ այն փաստերը, հասարակական հարաբերությունները, մարդկանց վարքագիծը։ Կախված դրանց արժեքային բնութագրերից և գնահատա-

---

6 Իհարկե, իրավագիտությունը չի կարող լիովին հանգեցվել իրավագիտակցությանը, քանի որ իրավաբանական գիտությունը իր մեջ ընդգրկում է նաև այլ տարրեր՝ մեթոդոլոգիա, բնագիտական տվյալներ և այլն (տե՛ս С. С. Алексеев, Проблемы теории права. Курс лекций в двух томах, т. I. Основные вопросы общей теории социалистического права, Свердловск, 1972, стр. 174).

7 В. М. Чхиквадзе, Государство, демократия, законность. Ленинские идеи и современность, М., 1967, стр. 343.

կանից՝ օրենսդիրը գործադրում է կարգավորման զանազան ձևեր»[8]։ Հենց այստեղ է, որ «անմիջականորեն իրավական կարգավորման մեխանիզմի աշխատանքում» ընդգրկվում է հիմնականում մասնագիտական, գիտական իրավագիտակցությունը և հատկապես իրավաբանական պրակտիկայում արտացոլված իրավագիտակցությունը[9]։

Ինչպես նշել է Կ. Մարքսը, տնտեսական փաստերը միայն այն ժամանակ կարող են օրենքի հաստատումն ստանալ, երբ դրանք ձեռք են բերում իրավաբանական շարժառիթի տեսք[10]։ Անհրաժեշտություն է առաջանում տնտեսական հարաբերությունները վերածել իրավաբանական սկզբունքների[11]։ Այդ նշանակում է հասարակական հարաբերությունները «թարգմանել իրավաբանական լեզվով», այսինքն՝ այդ հարաբերությունների կարգավորմանն ուղղված պետական կամքը ձևակերպել որպես իրավունքի նորմ[12]։

Այս դեպքում ինտելեկտուալ-կամային դրույթները ա) ձևակերպվում են որպես նորմատիվ դրույթներ, բ) ամրապնդվում են ճշգրիտ, սովորաբար մանրակրկիտ կանոնների տեսքով, գ) հագեցվում են պետական-հարկադրական ապահովության անհրաժեշտ միջոցներով, դ) ըստ անհրաժեշտության նրանց գործողությունը սահմանափակվում է ժամանակի ու տարածության մեջ և ըստ անձերի, ե) դրանք համապատասխանեցվում են այլ նորմատիվ դրույթների հետ, որպեսզի արդյունքում ստեղծվի ներդաշնակ իրավական սիստեմ[13]։

Այսպիսով, տեղի է ունենում հետևյալ պրոցեսը. նյութական հասարակական հարաբերությունները, մարդկանց վարքագիծը իդեալականորեն արտացոլվում են իրավագիտության կոնցեպտուալ ապարատում և գիտական վերափոխման ենթարկվելով՝ իրավական դրույթների նախագծերի տեսքով ներմուծվում են գործող իրավական համակարգ, օրենսդրություն, «առարկայանում են» իրավունքի գործող նորմերում։ Այստեղ ի հայտ է գալիս հասարակական հարաբերությունների իրավական արտացոլման ածանցյալ բնույթը։ Հետևաբար, իրավաստեղծության պրոցեսը որոշ իմաստով կարելի է պատկերել որպես իրավագիտության «նյութականացման պրոցես», քանի որ իրավաստեղծության պրոցեսում փաստորեն «առարկայանում է» իրավունքի գիտության մասին գիտական ինֆորմացիան։ Պետության կողմից հաստատվում և իրավական դրույթների են վերածվում իրավագիտության կողմից մշակված գիտական դրույթները և կոնստրուկցիաները[14]։

---

8 А. Ф. Черданцев, Основные проблемы теории толкования советского права, автореферат докторской диссертации, Свердловск, 1972, стр. 21.

9 С. С. Алексеев, նշվ. աշխ., հ. 2, էջ 177։

10 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 312.

11 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 37, стр. 418.

12 С. С. Алексеев, նշվ. աշխ., հ. 1, էջ 7։

13 Նույն տեղում։

14 Անհրաժեշտ է իրարից տարբերել իրավագիտության տեսական կոնստրուկցիաները գործող իրավունքի իրավաբանական կոնստրուկցիաներից։ Առաջիններն իրենցից ներկայացնում են «նորմատիվ նյութի այս կամ այն կառուցվածքի, իրավահարաբերությունների, իրավաբանական փաստերի տիպերի կամ տեսակների, դրանց գործողությունների և միմյանց հետ ունեցած կապերի տեսական բացատրություններ» (С. С. Алексеев, նշվ. աշխ., հ. 2, էջ 317)։ Մինչդեռ գործող իրավունքի «իրավաբանական կոնստրուկցիան, արտահայտելով

Ուշագրավ է իրավագիտակցության և մասնավորապես իրավագիտության դերի բացահայտումը իրավունքի կիրառման պրոցեսում։ «Դժվար է պատկերացնել իրավունքի կիրառման այնպիսի դեպք,— իրավացիորեն նշում է Ս. Ալեքսեևը,— որի ժամանակ գործողության մեջ չգրվի իրավագիտակցությունը»[15]։

Իրավագիտակցության մասնակցությունը իրավունքի կիրառման պրոցեսում հաճախ հանդես է գալիս օրենքի անմիջական պահանջի ձևով (տես՝ «ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական դատավարության օրենսդրության Հիմունքների» 19 հոդվ. կամ՝ «ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքների» հոդվ. 23)։

Իրավագիտությունը, անտարակույս, իրավունքի ճշգրիտ կիրառման կարևոր գրավականն է։ Իրավաբանական գրականության մեջ այդ հարցը լուսաբանելիս ցույց է տրվել իրավագիտության կողմից իրականացվող իրավունքի դոկտրինալ մեկնաբանության դերը, որն իր անմիջական արտացոլումն է գտնում «իրավակիրառար ակտերի բովանդակությունում և ձևակերպումների մեջ»[16]։

Սակայն այս հարցի լուսաբանման համար առավել արդյունավետ մոդել կարող է ծառայել Յու. Շրեյդերի առաջ քաշած առաջարկը՝ նման պրոցեսների լուսաբանման համար որպես չափանիշ ընտրել համակարգի թեզաուրուսի վերակառուցման աստիճանը նոր ներմուծվող ինֆորմացիայի ազդեցության տակ[17]։

Գ. Դոբրովը, զարգացնելով այդ գաղափարը, յուրաքանչյուր համակարգում եղած ինֆորմացիայի համար իրարից տարբերում է թեզաուրուսի 3 տեսակներ՝ նոմինատիվ, ֆունկցիոնալ և համարժեքային[18]։ Համակարգում եղած ինֆորմացիայի նոմինատիվ թեզաուրուսը տրամաբանորեն առավել սակավատարողունակ է։ Այն փաստորեն պարունակում է սոսկ հայտնի օբյեկտների ցանկը, որոնք մտնում են տվյալ դասի մեջ։ Ֆունկցիոնալ թեզաուրուսը իր մեջ պարունակում է ոչ միայն օբյեկտների դասերը, այլ նաև դրանց մեջ եղած նմանության և տարբերության, ամբողջի և մասի ու գիտության կողմից հայտնաբերված մի շարք այլ կապեր ու հարաբերություններ[19]։ Տրամաբանական տեսակետից առավել տարողունակ է համակարգի համարժեքային թեզաուրուսը, որտեղ օբյեկտները գտնվում են իրար հետ պատճառ-հետևանքային և սկզբունքային նշանակություն ունեցող այլ կապերի մեջ[20]։

սովորաբար իրավական ինստիտուտի մակարդակում իրավական նյութի կոմպոզիցիան, կապի օրենքը, իրենից ներկայացնում է իրավահարաբերություններ, իրավաբանական փաստերի տիպերի կամ ձևերի, դրանց միջև եղած կապերին համապատասխանող նորմերի կոմպլեքսների մոդել» (С. С. Алексеев, Структура советского права, М., 1975, стр. 31). Հետևաբար, եթե առաջին դեպքում գործ ունենք դիտական հասկացությունների համակարգի հետ, ապա գործող իրավունքում եղած իրավաբանական կոնստրուկցիաներն արտացոլում են իրավական դրույթների միջև եղած օբյեկտիվ կապերը։

15 С. С. Алексеев, նշվ. աշխ., հ. 1, էջ 178։

16 С. С. Алексеев, նշվ. աշխ., հ. 2, էջ 310։

17 Ю. А. Шнейдер, О количественных характеристиках семантической информации («Научно-техническая информация», 1963, № 10).

18 Г. М. Добров, Прогнозирование науки и техники, М., 1969, стр. 50—51.

19 Նույն տեղում, էջ 51։

20 Նույն տեղում, էջ 50։

Թեզաուրուսները առաջարկվող կոնստրուկցիան հնարավորություն է տալիս լուսաբանելու իրավագիտության որպես համակարգի ներքին տրամաբանական ստրուկտուրան, ցույց տալու այդ գիտության կողմից բացահայտված պատճառ-հետևանքային և սկզբունքային նշանակություն ունեցող այլ կապերի մեջ գտնվող հասկացությունների սիստեմը, ինչպես նաև լուսաբանելու իրավագիտության կողմից փաստերի հայտնաբերման ու դրանց մեջ հիմնական կապերի հաստատման պրոցեսի դինամիկան։

Իրավագիտության մեջ եղած այդ ինֆորմացիոն հարստությունն է, որ ներմուծվում է իրավական կարգավորման մեխանիզմի մեջ՝ մի դեպքում «առարկայանալով» գործող իրավունքում, օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի դրույթներում, մեկ այլ դեպքում՝ հարստացնելով իրավաստեղծ և իրավակիրառար սուբյեկտների գիտական թեզաուրուսները, բարձրացնելով դրանց իրավաբանական որակավորումը։ «Կատարողի որակավորման բարձրացումը,— նշում է Ա. Գուդշտեյնը,— ըստ էության նրա թեզաուրուսի աճն է։ Մասնավորապես ուսուցման հետ զուգորդված արդյունավետ (կամ հաջող) աշխատանքի աճը ցույց տվող հմտությունների կորերը... ըստ էության թեզաուրուսի ծավալի մեծացման և նրա կողմից օբյեկտիվ օրինաչափության առավել համարժեք արտացոլելու ուղղությամբ կատարած կառուցվածքային շարժման արտահայտություններն են»[21]։

Անհրաժեշտ է իրարից տարբերել թեզաուրուսների մի քանի համակարգեր, այն է՝ իրավագիտության թեզաուրուսները տարբերել իրավական կարգավորման մեխանիզմի և նրա առանձին տարրերի (իրավաստեղծություն, իրավունքի կիրառում և այլն) թեզաուրուսներից։

Ինֆորմացիան, ծնունդ առնելով հասարակական հարաբերությունների և գործող իրավական սիստեմի հետազոտության պրոցեսում, գիտական մշակման է ենթարկվում ու, վերածվելով գիտական փաստի կամ կոնցեպցիայի, ներմուծվում է իրավագիտության թեզաուրուսների մեջ։ Միաժամանակ տեղի է ունենում արդեն իսկ յուրացված փաստերի հետագա գիտական մշակումը և յուրացման խորացումը, ձևավորվում են տեսական նոր կոնստրուկցիաներ և կոնցեպցիաներ։

Իրավական կարգավորման մեխանիզմի, որպես համակարգի թեզաուրուսների համար մուտք են ծառայում իրավագիտության թեզաուրուսների և գլխավորապես նրա համարժեքային թեզաուրուսի ելքերը։ Դրանք մուտք են հանդիսանում նաև իրավաստեղծ, իրավակիրառար և իրավապահպանման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիների իրավական գիտելիքների թեզաուրուսներում։

Որքան առավել համարժեքային է իրավագիտության թեզաուրուսը, այնքան այդ գիտությունը կարող է հիմնավորված օրինագծեր առաջարկել իրավաստեղծ մարմիններին, այնքան ունակ է գործող օրենսդրությանը ադեկվատ

---

[21] А. И. Гутштейн, Управление промышленным предприятием и кибернетика, М., 1969, стр. 58—59. «Գիտական ինֆորմացիան,— նշում է Ա. Դ. Ուրսուլը,— փոխելով՝ մարդկանց գիտելիքների պաշարը (թեզաուրուսը), աղդելով նրանց արտադրական գործունեության նպատակների, միջոցների և ուղիների ընտրության վրա, աջակցում է մարդու հոգեկան, իդեալական և արտադրողական ուժերի աճին» (նշվ. աշխ., էջ 260)։

դարձնելու իրավակիրառար և իրավապահության սուբյեկտների գիտելիքներն ու գործունեությունը։

Գրականության մեջ գիտության անմիջական արտադրողական ուժի վերածվելու պրոցեսները լուսաբանելիս լուրջ ուշադրության է արժանացել գիտությունից դեպի արտադրություն հոսող գիտական ինֆորմացիայի վրա ազդող պրագմատիկ գործոնների հարցը։ «Գիտության որպես հասարակական գիտակցության ձևի մեջ բովանդակվող իմաստային (սեմանտիկ) ինֆորմացիայի ամբողջ զանգվածից արտադրության մեջ նյութականանում է միայն այն, որը նպաստում է նրա (արտադրության—Վ. Ն.) ամենից առավել օպտիմալ առաջադիմությանը։ Այսպիսով, գիտությունից արտադրություն ինֆորմացիայի կատարած շարժման պրոցեսում տեղի է ունենում սեմանտիկ ինֆորմացիայի բազմության պրագմատիկական սահմանափակում[22]։

Նմանօրինակ երևույթի կարելի է հանդիպել գործող իրավական համակարգի հետ իրավագիտության ունեցած կապերն ուսումնասիրելիս։ Իրավունքի տեսության ներքին տրամաբանական զարգացումը չի համընկնում և չի էլ կարող լիովին համընկնել գործող իրավական համակարգի կոնստրուկցիաներին։ Հետևաբար, իր սեմանտիկ և պրագմատիկ ասպեկտներն ունի նաև իրավագիտության կողմից արտադրվող ինֆորմացիան։ Մեր կարծիքով ի տարբերություն գիտության անմիջական արտադրողական ուժի վերածվելու պրոցեսի, այս դեպքում իրավագիտության ինֆորմացիոն հարստության սեմանտիկ և պրագմատիկ ասպեկտների կապը առավել ամուր է և օրգանական։

Առարկայանալով գործող իրավական համակարգում, իրավագիտական ինֆորմացիան սկսում է հակառակ ազդեցություն թողնել իրավագիտության մեջ արդեն իսկ մշակված կոնցեպտուալ սխեմաների վրա, այդ գիտության առաջ դնում է նոր խնդիրներ և տրամադրում դրանց լուծման նոր հնարավորություններ։

ПРАВОВЕДЕНИЕ И СИСТЕМА ПРАВА

ВЛАДИМИР НАЗАРЯН

Резюме

Характерный для НТР процесс превращения науки в непосредственную производительную силу актуализирует проблему раскрытия механизма «опредмечивания» достижений правоведения в действующей правовой системе, а также в сферах правотворчества и применения права. Для раскрытия сущности этого процесса конструктивным является применение Шрейдеровской теории о тезаурусах информации системы по интерпретации Г. М. Доброва. Такой подход, в частности, позволяет раскрыть роль правоведения в механизме правового регулирования, а также осветить некоторые стороны семантического и прагматического аспектов научной информации, «производимой» правоведением.

---

22 А. Д. Урсул, նշվ. աշխ., էջ 265։ «Գիտության,— շարունակում է հեղինակը,— որպես հասարակական գիտակցության ձևի համար ամենից ավելի կարևոր են ինֆորմացիայի սեմանտիկ բնութագրերը, իսկ գիտության որպես անմիջական արտադրողական ուժի համար՝ նրա պրագմատիկ բնութագրերը, արժեքավորությունը (օգտակարությունը)» (նույն տեղում)։